ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հատված Անդրե Կոմթ-Սփոնվիլի “Մեծ առաքինությունների մասին համառոտ քննախոսություն. Իմաստասիրության օգտագործումն առօրյա կյանքում” գրքից: (Լոնդոն, Վիլյամ Հեյմեման, 2001թ., ֆրանսերենից անգլերեն թարգմանված Քեթրին Թեմերսոնի կողմից):

Քաղաքավարությունն առաջին առաքինությունն է, և գուցե մյուս բոլոր առաքինությունների ակունքը: …

Այն կարող է քողարկել և լավագույնը, և վատագույնը, որով դառնում է կասկածելի: Քաղաքավարությունը կեղծիք է, իսկ մենք հիրավի միտված ենք զգուշանալու կեղծիքից: Այն զարդարանք է, և մենք հակված ենք զգուշանալու զարդերից: Դիդերոնը խոսում է բարձրաստիճան մարդկանց “արհամարհական քաղաքավարության” մասին: Կարելի է նաև նշել ցածրաստիճան մարդկանց շողոքորթության կամ ստրկաբարո քաղաքավարության մասին:

Քաղաքավարի ապօրինածնի մոտ ի՞նչն է այդքան խանգարող: Կեղծավորությունը չէ, որովհետև քաղաքավարի ապօրինածինը իրոք քաղաքավարի է: Քաղաքավարի դահիճն այնուամենայնիվ դահիճ է: Ինչպես արյունը սպիտակ ձեռնոցների վրա ավելի տեսանելի է, այնպես էլ չարը՝ քաղաքակիրթ լինելով, ավելի ակնհայտ է:

Միգուցե շեղվել եմ, բայց ոչ այնքան պատահաբար, ինչքան զգոնությունից դրդված: Քաղաքավարությունում կարևորը, նախ և առաջ, նրանից չխաբվելն է: Քաղաքավարությունը առաքինություն չէ և չի կարող զբաղեցնել առաքինության տեղը:

Ուրեմն ինչու՞ այն կոչել առաքինություններից առաջինը, մյուս բոլոր առաքինությունների ակունքը: Հակասությունն այնքան էլ մեծ չէ, ինչքան կարող է

թվալ: Առաքինությունների ակունքը չի կարող առաքինություն լինել (քանզի եթե լիներ, այն նույնպես ակունքի կարիք կունենար):

Քաղաքավարությունը մյուս առաքինություններից առաջինն է ժամանակի առումով, և ոչ թե կարևորության: Այն ծառայում է որպես անձի բարոյական զարգացման հիմք: Երեխան չունի բարոյական չափանիշներ, սակայն նա բավական վաղ է հայտնաբերում “արգելքները”: “Այդպես մի՛ արա, դա չարություն է, դա վատ է, լավ չէ, անվայել է…” Կամ էլ՝ “Վտանգավոր է”: Շատ շուտով երեխան սովորում է տարբերել, թե ինչն է պարզապես վատ (չարություն) և ինչն է նաև ի՛ր համար վատ (վտանգ), սովորում է տարբերել ատելին վնասակարից: Չարությունը խիստ մարդկային չարիք է. չարիք, որը չի վնասում (գոնե նրան, ով գործել է այն), և չարիք՝ առանց անմիջական և ներհատուկ վտանգի: Որոշ բաներ թույլատրելի են, որոշ բաներ արգելված են: Կանոնը բավարար է. այն նախորդում է դատավճռին և դրա հիմքն է: Բայց, մյուս կողմից, մի՞թե կանոնը չունի այլ հիմք, քան պայմանականությունը, չունի այլ արդարացում, քան վարվեցողությունը և վերջինիս հաստատած կանոնները: Այո, սա փաստացի կանոն է, անբասիր կանոն, քաղաքավարության կանոն: Մի՛ ասա վատ բառեր, մի՛ ընդհատիր, մի՛ հրիր, մի՛ գողացիր, մի՛ ստիր: Երեխային այս բոլոր ցուցմունքները միանման են թվում (“Լավ չէ”): Բարոյականի զանազանումը գեղագիտականից ավելի ուշ կլինի, այն էլ՝ աստիճանանբար: Այսպիսով, քաղաքավարությունը նախորդում է բարոյականությանը, կամ, ավելի ճիշտ, բարոյականությունը ի սկզբանե ոչ ավելին է, քան քաղաքավարություն. համաձայնություն վարվեցողության կանոնների ու աշխարհի ձևաչափերի հետ: Կանտի բարոյագիտության սկզբունքներից մեկն այն է, որ մարդը կատարվածից չի կարող եզրակացնել, թե ինչ պետք է անի: Սակայն երեխան վաղ հասակում ստիպված է հենց այդպես վարվել, և միայն այս ձևով է նա մարդ դառնում: Կանտն ինքը համաձայն է: “Մարդը դառնում է մարդ միայն ուսմամբ,- գրում է նա: -Մարդը սոսկ այն է, ինչ ուսումն է իրեն դարձնում”: Իսկ գործընթացը սկսվում է դաստիարակությամբ, որը “կենդանական բնույթը փոխում է մարդկայինի”: Սրանից ավելի լավ չէր կարելի ասել: Սովորությունը նախորդում է արժեքին, հնազանդությունը՝ հարգանքին, ընդօրինակումը՝ պարտականությանը: Ուստի քաղաքավարությունը (“այդպես չեն անում”) նախորդում է

բարոյականությանը (“այդպես պետք չէ անել”): Բարոյականությունը կամաց-կամաց դառնում է ներքին քաղաքավարություն, որն իրեն ազատել է քննարկվելուց կամ երևալուց, և հետաքրքրելուց, ու ամբողջովին կենտրոնացած է նպատակների վրա, որի հետ քաղաքավարությունն առնչություն չունի: Լավ վարվելաձևը նախորդում է և պատրաստում է ուղին դեպի բարի արաքներ: Բարոյագիտությունը հոգու քաղաքավարություն է, ներքին կյանքի բարեկրթության կանոնների, պարտականությունների օրենսգիրք, էության հանդիսակարգ: Մյուս կողմից, քաղաքավարությունը կարելի է նմանեցնել մարմնի բարոյականության, վարվեցողության կանոնների, հասարակության մեջ ապրելաձևի օրենսգրքի, հանդիսակարգ ոչ էության համար:

Եվ այսպես, բարոյականությունը սկսվում է քաղաքավարությունից: Բայց այն պետք է սկսվի ինչ-որ տեղից: Բնական առաքինություններ չկան, ուստի մենք պետք է դառնանք առաքինի: Ինչպե՞ս: “Այն ամենը, որ պետք է սովորենք նախքան անելը,- ասում է Արիստոտելը,- սովորում ենք անելով”: Սակայն ինչպե՞ս կարող ենք անել այն, ինչ չենք սովորել: Երկու ձև կա դուրս գալու այս շրջանաձև պատճառականությունից. մեկը ապրիորությունն է, մյուսը՝ քաղաքավարությունը: Սակայն ապրիորությունը մեր հասկացողությունից դուրս է, իսկ քաղաքավարությունը՝ ոչ: “Մենք դառնում ենք արդար,- շարունակում է Ապիստոտելը,- անելով արդար գործեր, չափավոր՝ չափավորություն դրսևորելով, խիզախ՝ խիզախորեն վարվելով”: Սովորություններով,- ըստ երևույթին ասում է Արիստոտելը, բայց այդ պատասխանը ակնհայտորեն անբավարար է: Սովորությունը ենթադրում է նախնական գոյությունը այն բանի, որը մենք դարձնելու ենք սովորույթ, ուստի չենք կարող այն հաշվի առնել: Կանտը ավելի օգտակար պատասխան է տալիս: Նրա համար առաքինության այս առաջին նշույլները կարելի է բացատրել դաստիարակության պայմաններով, այլ կերպ ասած՝ որպես արտաքին ճնշման արդյունք: … Դաստիարակություն … Հարգանք վարվելաձևին ու բարեկրթությանը … Ասել “խնդրում եմ” կամ “ներեցեք”, նշանակում է ձևանալ հարգալից: Ասել “շնորհակալություն”, նշանակում է ձևանալ երախտապարտ: Եվ հարգանքի ու երախտապարտության հենց այս ցուցադրությամբ էլ սկսվում են և՛ հարգանքը, և՛ երախտապարտությունը: Ճիշտ այնպես, ինչպես բնությունը ընդօրինակում է արվեստին, բարոյականությունը ընդօրինակում է քաղաքավարությանը, որն էլ

ընդօրինակում է բարոյականությանը: Եթե մենք դառնում ենք բարոյական, ապա դա ոչ թե առաքինության միջոցով է, այլ՝ ուսման, ոչ թե հանուն բարության է, այլ՝ ձևի, ոչ թե բարոյականության նկատառումներով է, այլ՝ քաղաքավարության: Բարոյականությունը նախ հնարք է, հետո փաստ: Առաքինություն ընդօրինակելով, դառնում ենք առաքինի: “Քանզի երբ մարդիկ խաղում են այս դերերը,- գրում է Կանտը,- աստիճանաբար հաստատվում են առաքինություններ, որոնք մինչ այս միայն ձևացվել են: Այս առաքինություններն ի վերջո կդառնան խաղացողի խառնվածքի մի մասը”: … “Բնավորության կառուցվածքները բխում են նման գործունեություններից”, ասում է Արիստոտելը: Քաղաքավարությունն առաքինության այն ձևացումն է կամ նմանությունը, որից առաջանում են առաքինությունները:

Մենք ի վերջո նմանվում ենք նրան, ինչն ընդօրինակում ենք և քաղաքավարությունը, աննկատելիորեն մղում է, կամ կարող է մղել դեպի բարոյականություն: **Ամեն մի ծնող գիտի դա և դա կոչվում է երեխա մեծացնել**: Ես լավատեղյակ եմ, որ քաղաքավարությունն ամեն ինչ չէ, ոչ էլ էականն է: Այնուհանդերձ, ընդունված փաստ է, որ առօրյա լեզվում “**լավ դաստիարակված**” լինելը նշանակում է նախ և առաջ քաղաքավարի լինել, ինչն ակնհայտ երևույթ է… **“Դաստիարակում**” բառը, գիտեմ, մեզ հաճելի չէ, բայց ո՞վ դրա կարիքը չունի: **Մերը բավարար չէ երեխա դաստիարակելու համար, բավարար չէ անգամ նրանց սիրելի կամ սիրալիր դարձնելու համար:** Քաղաքավարությունը ևս բավարար չէ: Դա է պատճառը, որ կարիք ունենք և քաղաքավարության, և սիրո: Ընտանեկան դաստիարակությունը, ըստ իս, այս երկու բևեռների միջև է գտնվում …

Ուստի քաղաքավարությունն առաքինություն չէ, այլ մի նմանակում, որն առաքինության ընդօրինակումն է (չափահասների համար) և նրա ուղենիշը (երեխաների համար): **Երեխայի քաղաքավարությունը, իր բնույթով, կարող է չտարբերվել չափահասների քաղաքավարությունից, սակայն տարբեր է իր նշանակությամբ:** Երեխայի համար այն էական է, մեծերի համար՝ անէական: Ի՞նչը կարող է ավելի տհաճ լինել քան վատ դաստիարակված երեխան, բացառությամբ, գուցե, չար չափահասի: **Մենք այլևս երեխաներ չենք**: Մենք գիտենք ինչպես սիրել,

ինչպես կամենալ և ինչպես դատել: Եվ մենք ընդունակ ենք առաքինության և սիրո, ինչին քաղաքավարությունը չի կարող փոխարինել… Կան անգամ այնպիսի մարդիկ, որոնց քաղաքավարությունն իր կատարելությամբ խանգարում է մեզ: Հիրավի, լիակատար քաղաքավարությունը կեղծավորության կասկածի տեղիք է տալիս, քանզի անկեղծությունը երբեմն պահանջում է, որ մենք շրջապատին տհաճություն, զարմանք կամ ցավ պատճառենք: Բոլորս էլ գիտենք այնպիսի մարդկանց, ովքեր իրենց անկեղծությամբ հանդերձ, ողջ կյանքում մնում են բարեկրթության գերիներ՝ իրենց անձնավորությունը չբացահայտելով շրջապատին՝ բացառությամբ քաղաքավարության ապակեպատ շղարշի ետևից, կարծես վերջնականորեն շփոթելով ճշմարտությունն ու բարեկիրթ վարվելակերպը… **Գերադասելի է լինել չափազանց անկեղծ՝ ի հաշիվ քաղաքավարության, քան թե չափազանց քաղաքավարի՝ ի հաշիվ անկեղծության:**

Կյանքում ավելի կարևոր բաներ կան, քան բարեկրթությունն է, իսկ քաղաքավարությունն էլ բարոյականությունը չէ: Այնուհանդերձ, այն անիմաստ էլ չէ: Քաղաքավարությունը մի փոքր բան է, որը ճանապարհ է հարթում դեպի մեծ բաներ… Ինքնաբավ քաղաքավարությունը, որն իրեն չափազանց լրջորեն է վերաբերվում և հավատում է իրեն, այն է, երբ սեփական բարեկրթության պատճառով, խախտում է իր իսկ կողմից սահմանվող կանոնները: Ինքնաբավությունը միշտ անքաղաքավարի է:

Իմաստասերները կբանավիճեն այն հարցի շուրջ, թե ձևն իրոք ամենն է՝ ինչ կա, թե բարոյականության և քաղաքավարության միջև տարբերությունը մտացածին է: Գուցե սոսկ վարվելակերպն ու հարգալից վերաբերմունքը՝ քաղաքավարությունը իրոք ամեն ինչ են… Սակայն ես նման բանի չեմ հավատում: Սերն իր տեղն ունի, բարությունն՝ իր, կարեկցանքն էլ՝ իր: Քաղաքավարությունն ամեն ինչը չէ, հիրավի՝ գրեթե ոչինչ է: **Գրեթե,** բայց ոչ իսպառ, քանզի մարդն ինքը **գրեթե կենդանի է:**